



7 (162). ՎԵՐԻՆ ԱՆՇԱՐՆ Է ՓԼԻ

Ճեւտ կէրթա ծառի տակ քջեջ կէնե, գուզ մե կը պատի վըր
ղլխուն, կատարքն փշուր մե կ'արընջրի, ափալ-թափալ կը փախնի:
Շատ կէրթա թե քիչ, վառեկ գիկա ոաստ:

— Յա', խեր էղնի, ճեւտ ախպեր, էդ յո՞ւր հմլա հանքակտուր
կը փախնիս կ'ըրթաս,— կը հարցու վառեկ:

— Խեր ու բարին վըր քըզի, վառեկ քուրիկ, չըս դի՞նա, վերին
ախշարն է փլի, կը փախնիմ, օր ազատվիմ:

— Ծս լե քըզի յընկեր:

Շատ կէրթան, քիչ կէրթան, աղվես գիկա ոաստ:

— Վառեկ քուրիկ, խեր էղնի, յո՞ւր կէրթաք:

Ճեւտ ախպեր կըսե.

— Վերին ախշարն է փլի, փախնինք, օր ազատվինք:

Աղվես կըսե.

— Ծս լե ձըզի յընկեր:

Կ'ըրթան, կէրթան, գել գիկա ոաստ:

— Աղվես ախպեր, խեր էղնի, հմլա քոմոզ յո՞ւր կէրթաք:

— Վերին ախշարն է փլի,— կըսե ճեւտ ախպեր,— փախնինք,
օր ազատվինք:

— Ծս լե ձըզի յընկեր:

Յետև գիլուն առջ լե գիկա, էջ լե գիկա, գիմնան, օր ճեւտ ախ-
պեր ըսեր է՝ «Վերին ախշարն է փլի, կը փախնինք, օր ազատվինք»:
Արջն ու էջ լե յընկեր կը դառնան ու հավարոզ կէրթան: Կէրթան,
ի՛մալ կէրթան, առանց յետև աչքելու, գուլի պես կէրթան, կըսիս
հանգե ախշարք փլավ վըր ուրանց: Դե էրթլուն վեռջ պտի էղնի՞, թե

չի, անոթի, անսվաղ կէրթան, անոթն փոր ուրանց վեց-վեց կէնն:
Աղվես կէրթա ու մեղ ու մթալալ կէնն՝ «Ի՛մալ էնինք»,— կըսե, — օր
ղմեր փոր կշտացունք»:

— Ախարտի՛ք, — կըսե աղվես, — մենք կէրթանք, շատ աղեկ,
հարի յո՛ւր պտի էրթանք, չէ օր փոր լե գուր գուղե. մեռնինք՝ ինչ է
թե վերին ախշա՛րքն է փլի, փառք աստծու, մեր ներքին ախշարթ
դըռ չփլերե, արեք հնարք մե գտնանք, զմեր փոր կշտացունք, թե
մեռանք լե, կուշտ փորով մեռնինք:

— Ի՛նչ հնարք, — հարցուցին յընկերտանք:

— Արեք մենք զմեր անուններ ըսինք, վիր անուն օր դուր չէ-
կավ իդա ջաղամաթին՝ ղէնի թալինք գետին ուտինք:

Ճետ

Ես ճետ իմ ու դնգի նետ իմ:

Վառեկ

Ես վառեկ իմ ու ճըվստուն պառեկ իմ:

Աղվես

Ես աղվես իմ ու ամիրի քուրքի յերես իմ:

Գել

Ես գել իմ ու փել իմ:

Առջ

Ես առջ իմ ու կանանչ փարշ իմ:

Էշ

Ես էշ իմ ու գեշ իմ:

— Դուք քու բերնով խոստովանար, օր՝ «էշ իս ու գեշ իս» —
ըսեց աղվես, պտի շաղամաթ կշտացուս:

Առջն ու գել թալին գետին զէշ, կտոր-կտոր էրին, յըմեն կե-
րան, ճետն ու վառեկ մանցին անոթի:

Վառեկն ըսեց .

— Ճե՛տ ախպեր, վաղ լե աղվես զմեր բուրգ պտի տա գգել,
արի՛ դառնանք մեր տեղ, ջանդամ թե ախշարք կը փլի:

Դառձան ուրանց տեղ, ազատվան աղվըսու ֆել ու ֆանդից:

